Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

631.51
Մ-50

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

ՅԵ՞ՐԲ ՅԵՎ Ի՞ՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ՎԱՐԵԼ ԱՐՏԱՏԵՂԸ

(ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆ Բ. Լ. ԲՐՈՒԿԻՑ)

ԿՈՍՏԱՆՏԻՆ Կ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Ի. Լ. ՂԱՐԱԲԱՂԻ ՊԵՏՀՐԱՏԻ № 9

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ
1926 թ.

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք
2 4 SEP 2010
631.51
Մ-50

ՅԵ՞ՐԲ ՅԵՎ Ի՞ՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՎԱՐԵԼ ԱՐՏԱՏԵՂԸ

(ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆ Բ. Լ. ԲՐՈՒԿԻՑ)

ԿՈՍՏԱՆԴԻՆ Կ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Ի. Լ. ՂԱՐԱԲԱՂԻ ՊԵՏՀՐԱՏԻ № 9

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ
1926 թ.

0.25.7Կ.06.2013

17.050

Ինքնավար Լեռնային Ղարաբաղի Լուսժողկոմատի տպարան

Պատվեր № 821 Տիրաժ 1500

Ի՞ՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ԱՆԵՍ, ՎՈՐ ՄԻ ԴԵՍՅՏԻՆ ՏԵՂԻՑ 100 ՓՈՒԹ ՑՈՐԵՆ ՎԵՐՑՆԵՍ ՅԵՎ 12 ՍԱՅԼ ԾՂՈՏ (ՔՅՈՒԼԱԾ)

Կարդա՛ այս գրածը և կիմանաս, թե ի՛նչ պետք ե անես, վոր այդքան բերք ստանաս։

Մեզանում, յեթե մի դեսյատին տեղից 60 փութ ցորեն են վերցնում, շատ գոհ են մնում, բայց բերքը սովորաբար լինում ե 40—50 փութ և են ել հաջող տարիներին։

Գյուղատնտեսական գիտությունը, որձերի վրա հիմնված. գիտե, թե ի՛նչպես կարելի ե ցորենի բերքը շատացնել մեկ ու կես անգամ ավելի, քան ստացվում ե և են առանց առանձին ծախք անելու, մինչև անգամ հողը գոմի աղբով կամ ուրիշ բանով պարարտացնելու։

Ի՞նչն է պատճառը, որ մենք հացահատիկներից քիչ բերք ենք ստանում։

Դրա պատճառն են է, որ մենք ցելն իր ժամանակին չենք կատարում, հողը լավ չենք հերկում (վարում)։

Խամ հողն առանց հերկելու թողնում ենք մինչև սեպտեմբեր, հոկտեմբեր ամիսը, հողը չորանում է և տավարի վոտի տակ ենպես է պնդանում, որ առանց անձրեվի կամ ջրելու չի վարվում։

Գալիս է անձրեվը, գյուղացին վարում է արտը և նա պինդ կոշտեր է ձգում և տեղական փայտի փոցխը *) (կռաբլի) նրան չի բռնում, չի մանրացնում։

Ցին առանց փոցխելու ճնալով չորանում, պնդանում է և են ել շատ խորը, միայն լավ անձրեվներից կամ ջրելուց կարելի է լինում փոցխով (կռաբլով մանրացնել) փրխ-

*) Ցերկաթե կամ փայտե ատամներով, մեծ սանդրի նման մի գործիք է, յերկար կոթով։

բացնել և սերմը ձգել։ Մեզանում մինչև անգամ գութանով վարելուց հետո առանց փոցխելու սերմը ձգում են և հետո փոցխում։ Սերմը խոր ակոսների (ծեր) մեջ է ընկնում կեսը փչանում է, նա ծիլ չի տալիս։ Դրանից է, որ փոխանակ 7—8 փութ սերմի 12 փութ և ավելի սերմ են ձգում և գանգատվում, թե ինչու քիչ բերք տվեց արտը։

Վարեց, սերմը ձգեց, փոցխեց և դրանով վերջանում է գյուղացու աշխատանքը։

Հողն եդպես մշակելուց լավ բերք մի սպասիր։

Յեթե ժամանակին անձրեվ գա, արտը կջրվի, ելի մի բան կստանաս, բայց յեթե տեղը դեմիյա է, անջրովի, անձրեվներ չեն գալիս, ինչ պիտի ստանաս, մի 20—30 փութ ցորեն և վոչ ավելի, իսկ եդ քո արած ծախքն ել չի հանիլ։

Գյուղացու տնտեսության մեջ գարնանավարը ցանելուց հետո աշնանավարի համար

չեն մտածում, ազատ հողը թողնում են յերեսի վրա մինչև աշունքը, չնայելով որ ազատ ժամանակ են ունենում հերկելու։

Ինչու համար չեն վարում։

Տավարի համար։

Վորովհետև նախիրը, հոտը, պետք է այդ ազատ հողերում արածի։

Այդ ազատ հողերում, ճիշտ է, գարնան անձրեվներից հետո տավարը արածելով մի բան է գտնում ուտելու, բայց հետո նա վոչ թե արածում է, այլ զբոսնում, քաղցած տուն վերադառնում և կաթ չի տալիս կամ միս չի բռնում։

Հողատերը յերկու նապաստակի հետևից է վազում. նա միաժամանակ ուզում է թե տավարին կերակրել և թե աշնանացանի համար տեղ ունենալ։

Բայց իզուր չե ասված, որ «յերկու նապաստակի հետևից ընկնողը մեկն էլ չի բռնիլ», կամ մի ձեռքով չի կարելի յերկու ձմեռուկ բռնել։

Եդպես էլ լինում է։

Վոչ լավ բերք է ստանում և վոչ էլ տավարին կշտացնում։

Յեթե ուզում ես հացահատիկ ունենալ, արտատեղի վրա տավար արածացնելդ թող։ Մայիսի սկզբներից տավարն արտատեղից հեռացրու, սկսիր քո վարը, աշնանացանի համար պատրաստիր։

Կհարցնես, բաս տավարս վո՞ր տեղ պահեմ։

Տավարիդ համար ուրիշ տեղ գտիր, կամ տանը կերակրի կամ թե հողաբաժնիցդ մի կտորը թող նրա համար։ Յեթե դժվարություն կա միանգամից վերջ տալ ամբողջ ցանքատեղի վրա արածացնելը, գոնե նրա մի մասը կանոնավոր մշակիր։

Ի՞նչպես պետք է կանոնավոր մշակել։

Ամենագլխավորը՝ դա վարդաժամ (շուտ) վարելն է։

Վորքան շուտ, ենքան լավ։

Կարիք չկա խորը վարելու։

Լավ է վարելը, բայց յերեսանց, իր ժամանակին։

Մեր խորհուրդն է խամ հողը վարել մայիսին։

Ցեղն արա իսկույն, հենց վոր գարնանացանի սերմը (կորեկ լինի թե գարի) ցանում ես։

Միտդ պահիր, վոր խամ տեղի վարի ամեն մի ուշացրած որը քեզ վրա թանգ կնստի, դու մի դեսյատին տեղից որեկան մի փութ հացահատիկ և 2 փութ ծղոտ (քյուլաշ) կորցրած կլինես։

Վարի յետեվից փոցխ պետք է ձգես, այդ անհրաժեշտ է։ Ցեթե յերկու ձի ունես, թող արորը (ալաթ) կամ գութանը քաշեն մինչև կես որ, կես որից հետո թող վարած տեղը փոցխեն։ Եղպես էլ արա յեզ ու գոմեշով վար անելիս։ Ինչվոր ետոր վարել ես, պետք է եղ նույն ոն էլ փոցխես (կրաբլի տաս), քանի

վոր հողը խոնավ (նամ) է։

Բայց դրանով գործը չի վերջանում։

Խամ հողը մշակելուց, վարելուց շուտ է ալաղը կոխում, եդ չպետք է թողնել. վարած արտատեղը, մինչև նրա վրա սերմ ձգելը, պետք է մաքուր մնա, ալաղ, ժանգալ չը կոխի։

Քանի վոր վարած հողի վրա դուրս յեկած ալաղը մանր ու թույլ է, նրանց փոցխով հանելը, հողից դուրս քաշելը հեշտ է։ Փոցխիր վարդ հենց վոր վրան կանաչ յերեվաց։

Այդ դժվար չե անել. թե ձի ունես, լծիր փոցխին, թող տղաղ վրան նստի, գնա ու գա։

Կան մի քանի տեսակ մոլախոտեր (ժենգալներ), վոր շուտ են ուժեղանում և փոցխով դժվար է դուրս գալիս, ինչպես չայիրը և ուրիշները։

Են դեպքում, յերբ մոլախոտը կոխել է և տարածվել, պետք է կրկին վարել։

Կարելի յե վարել շատ մանր։ Ցեթե վա-

ը յերկխուփանի գութանով լինի, կարելի է նեղ շերտով վերցնել հողը և վոչ լաստ լաստ լայն շերտով։ Եղ բանը թե ձիյերի կամ ուրիշ լծկանների համար հեշտ կլինի և թե վարած հողը քիչ կչորանա։

Վարիր նեղ շերտերով և գութանի յետևից անպատճառ փոցխիր, ինչպես առաջին վարի ժամանակ։

Յեթե վոր սաստիկ անձրևներ գան, փոշիացած հողը կեղեվ (կճեպ) կկապի և կըպնդվի։

Կեղեվը չորանում է, ճաքճքվում։

Կեղեվը կապվելուց հողը շուտ է չորանում։

Անհրաժեշտ է անձրեվից հետո նորից փոցխել, կեղեվը փշրել։

Այդ աշխատանքը կատարելը կարելի է դարձյալ տղաներին հանձնել։

Յեթե անձրեվ է գալիս, յերեք որ անցած պետք է գնալ վարած տեղը տեսնել, թե

արդյոք չի պնդացել կամ մաքուր է։

Հողը կանոնավոր մշակելու համար պետք է գործիքներ ունենալ՝ արորի փոխարեն յերկաթի գութան և փայտի փոցխի տեղ յերկաթե փոցխ։

Պետք է թողնել փայտի փոցխը. նա չի կարող կոշտերը (կռոճները) փշրել. նա թեթեվ է, վեր վեր է թռչում, չի փշրում, միայն պետք է նրա տեղը յերկաթե զիգզակ ասված փոցխը բանեցնել։

Եղ փոցխը թե լավ է գնում, թե ատամները լավ են կտրում, կոշտերը մանրացնում, թե արտը հավասարեցնում։

Ես ասածներից հետևում է, վոր հողը կանոնավոր վարելու համար պահանջվում է՝

1. Վարատեղը վարել գարնանացանը սերմելուց հետո, մայիսին և են ել խորը։

2. Գութանելուց հետո նրա յետեվից փոցխ ձգել, առանց ուշացնելու։

3. Վարած տեղում, հենց վոր սկսի մոլախոտ (ժանգալ) բռնել, նորից փոցխել։

4. Յեթե մոլախոտը խոր արմատ է ձգել,

նորից գութանով խոր վարել և հետո փոցխի միջոցով հավաքել, արտից հեռացնել։

5. Սաստիկ անձրեվներից հետո փոցխել։

Եպիսով տեսնում ենք, որ այժմ փոխանակ մի անգամ գութանով վարելու, 2 անգամ ենք գութանում և 3—4 անգամ փոցխում։

Կարող են շատերն ասել, որ այդ ասածները ճիշտ չեն, իրենք մայիսին փորձել են վարել, բայց լավ բերք չի տվել։

Հարցնում ենք,—մայիսին վարել ես, բայց փոցխե՞լ ես։

Մոլախոտ (ժանգալ) կամ ալաղ կոխելուց նորից գութան ե՞ս ձգել։

Շատ պարզ է, յեթե մեկը հողը վարում է շուտ, ասենք թե մայիսին և յերեսի վրա թողում, ալաղով ծածկվում է, տավարը մեջն արածելով, գործը փչանում է։

Եզքան շատ վարից լավ բան չի ստացվում։

Իսկ յեթե ենպես անեն, ինչպես եստեղ ասված է, հատարձակ կարելի է հույս ունենալ, որ կարելի յե առանց պարարտացման էլ մի դեսյատին տեղից 100 փ. բերք ստանալ։

ՀՀ Ազգային գրադարան
NL0286387

17. 050

ԳԻՆՆ Է Ց ԿՈՊԵԿ